

այնպես գտաւ ինչպէս կը յուսար: Կրօնաւորք սիրով իջան անապատեն թաղելու համար իրենց քրիստոնեայ եղբարց մարմինները: Իսկ Չաւեն, որ Գրիգորի մարմինը կը փնտրէր՝ չը գտնելով ոչ Նորա եւ ոչ Սուրենի մարմինը, փառք կ'ուտար աստուծոյ եւ կ'ըսէր. «Օր մը անշուշտ յանկարծ կ'ուզայ եւ ես ձեռոքս իրեն կը յանձնեմ քուրիկը»:

Անկից իջաւ ծովեզրը, լիճը խաղաղ կը ծիծաղէր՝ անտարբեր մարդկային ողորմելի յուզմանց վրայ, ելաւ լողալով մակոյկին քով Նստաւ, Նոյն տեղ, ուր Արփենին առաջի օրը Նստած կը սպանէր իւր մայրիկին, ջուրը իւր վճիտ կերպարանքն առաւ. ան ատեն Նայեցաւ եւ տեսաւ ջուրին տակ մայր ու աղջիկ քովե-քով, մտաւ եւ առանց դժուարութեան հանեց զիրենք ցամաք. ըսաւ ինքնիրեն. «Աստ այս կղզին անխօս վկայ այս սքանչելի մօր եւ հրեշտակային զաւկին պարկեշտութեանց թող իրենց գերեզման լինի. ապագային մէջ աւագակաց եւ արիւնարբու ճիւղաց թերեւս միմիայն ապահովութիւն աստ գտնուի. մինչեւ որ իշխանիկը երեւան ելնէ»: Մտաւ մակոյկը, գնաց բերաւ ամեն պէտք եղածը, փորեց գերեզմանը առսուոյ ծառի մը տակ, եւ երբ ամեն հանգստեան կարգ կատարուեցայ, ինք մեռելաթաղ, ինք սպասաւոր, ինք հայր եւ եղբայր եւ ամենայն լինչելով, յորդառատ արտասուոք ողողեց գերեզմանը, ինք Նաեւ զարմանալով թէ ծեր զինուոր՝ իւր այդ աչքերը, որ հուր գիտէին թօթափել, ուստի՞ այդչափ արտասուք կը բխէին, որ բոլոր կեանքին մէջ այնչափ ունեցած չէին:

Իսկ երբ արտասուքը սրբեց, ժողովեց աստուծոյ պաշտօնեայքը եւ հանեց բերդին առջեւ, տուաւ կրակը բորբոքեց մակոյկը, որպէսզի ոչ ոք կարենայ մերձենալ կղզուոյն, ան ատեն. «Ամենայն ինչ կատարեալ է»,— ըսաւ, եւ գլուխը կուրծքին դրած՝ անցեալին մէջ թաղուած այդ բերդին հանդեսները, կոչունքները, ուրախութիւնքը, սուգերը եւ տրտմութիւնքը Նաեւ՝ ամենքը աչքին առջեւ տեսնելով յաջորդաբար, ուր երկայն տարիներ անցուցեր էր, եւ քսանչորս ժամ բաւական եղած էր անյայտ, անյիշատակ ընելու, դարձեալ Կ'աղզուանի ճամփան բռնեց մոռնալով Նաեւ իր Նժոյգը, որ ծանր իր ետեւեն կը քալէր լռիկ եւ տխուր իբր թէ չի համարձակելով իւր տիրոջ խորհրդածութիւնքը շփոթել:

Բայց վերջապէս Չաւեն իբր քունէ արթնացաւ, վասնզի ծունկերը չէին ուզեր իրեն հնազանդիլ, սաստիկ յոգնութիւն մը զինք առէր էր, հեծաւ իրեն ձիուն վրայ, Նոր զգացմունք մը՝ գլուխը սկսաւ պտոյտ գալ, այնպէս, որ եթէ չզգուշանար պիտի ինկներ ձիեն, այս Նոր երեւոյթներէն արթնացած միտքն եկաւ թէ ամենեւին բերանը բան չէր դրած, եւ արեւը մայր մտնելու մօտ էր,